

ՀԱՅ ԳԻՐՔԸ 1512—1800 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ, ԿԱԳՄԱՂԵՆԵՐ՝ Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կուրկյան-յան, Ա. Մ. Սավալյան, Երևան, ՀեՍՀ Այ. Մյասնիկյանի անվան պետական գրադարան, 1988, 861 էջ:

Բանասիրության հիմքը բառարաններն ու մատենագրություններն են: Եթե այսօր հայ բառարանագրության վիճակը կարելի է ընդհանուր առմամբ բավարար համարել (թեև այս ասպարեզում էլ գեոնա շատ անելիքներ կան), ապա հայ մատենագիտության մեջ կան բազմաթիվ բաց տեղեր, որոնց պատճառով դժվար ու դանդաղ է առաջանում հայ մշակույթի ու պատմության լիարժեք ուսումնասիրությունը: Հրապարակ է հանվել հայկական բազմազար և աշխարհասփյուռ գրչագիր գրքերի ցուցակների մի մասը միայն: Թերատ ու անբավարար են հայ պարբերական մամուլի և առանձին հայ հեղինակների երկերի մատենագիտությունները: Վաստակաշատ մատենագետ Հակոբ Անասյանի անգնահատելի աշակերտի մատենագիտությանը երկու հատորը միայն բախտ ունեցանք տպագրված տեսնել մեզ մոտ:

Ձեռյած թուր օրյեկտիվ ու սուրյեկտիվ արգելափակ պայմաններին, տակավին վաղ միջնադարից սկիզբ առնող և հարուստ ավանդույթներ մշակած հայ մատենագիտությունը այսպես թե այնպես շարունակում է տալ իր պտուղները: Դրանց թվում է նաև ամենանշանակալիցը՝ Այ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի հրատարակած «Հայ գրքի մատենագիտության» առաջին հատորը, որը ներկայացնում է հայ հնատիպ գրքի մատենագիտությունը (սրա շարունակությունը կարող է համարվել Հ. Դավթյանի կազմած և դեռևս 1967 թ. հրատարակած «Հայ գիրքը 1801—1850 թվականներին» աշխատանքը): Ծավալուն ու մեծադիր այս հատորը ընդգրկում է 20 էջանոց առաջաբանով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, հեղինակ՝ Ն. Ոսկանյան), այնուհետև ժամանակագրական կարգով տրվում է XVI—XVIII դդ. տպագրված հայերեն գրքերի նկարագրությունը, որին հաջորդում են մի շարք ցանկեր:

Առաջաբանում համառոտակի ներկայացվում է հայ տպագրության սկզբնավորումը: Հայերեն առաջին տպագիր գրքերի բովանդակության և այլ տվյալների հիման վրա ընդգծվում է այն ճշմարտությունը, որ «հայ տպագրիչների ու հրատարակիչների զխավոր նպատակը նյութական շահը չէր, այլ՝ այլալեզու և օտար միջավայրում ձուլման վտանգի առաջ կանգնած հային իր լեզվին ու ազգային ավանդույթներին ամուր շաղկապելու, մայրենի լեզվով գիր ու գրականություն մատուցելու ազգապահպանման վեհ ձգտումը» (VII): Առաջաբանի հեղինակն իրավամբ չի բացառում, որ գուցե Հակոբ Մեղակարտից առաջ գործել է մեկ ուրիշ հայ տպագրիչ: Մանավանդ որ, ինչպես հայտնի դարձավ 1985-ին, Մայնցում 1486 թ. լույս է տեսել գերմաներեն մի գիրք, որտեղ գետնից էլ մեզ հայտնի առաջին հայերեն տպագիր աշխատանքը՝ Այստեղ, անհրաժեշտ է հիշել կենսագրագետ Հայկ Տեր-Աստվածատրյանցի «Բառարան հայ կենսագրությանը» գրքում (պրակ Ա, Թիֆլիս, 1904, էջ 15-ի ծան.) Աբգաբ Դպիր հոգվածի կապակցությամբ տրված հետևյալ վկայությունը. «Են տեսել եմ հանգուցյալ Ստեփանու Տեր-Ստեփանոսյանի՝ գրադարանում մի գիրք տպված 1486» (չեմ հիշում, միայն 5 էր կամ 6-ը), որի մեջ ս. Գրքից հատվածներ են տպված քանի մի լեզվով և ի թիվս այլոց նաև հայերեն երկաթագիր տգեղ տառերով սաղմոսից մի հատված: Եթե չեմ սխալվում այս դիրքը տպված է՝ Մարտիլ քաղաքում: Սրա հիման վրա գտնեմ ես դժվարանում եմ հավա-

1 Տե՛ս Լ. Ի. Կиселева, Западноевропейская книга XIV—XV вв., Л., 1985, 9. Արգարյան, Հայոց տպագիր աշխատանքներ 500 տարեկան է (Հայրենիքի ձայն, 22. II. 1986):

2 Այս անձնավորությունը Խ. Արսլյանի հետ միասին սովորել է Ներսիսյան դպրոցում, ապա ուսումը շարունակել Պետերբուրգում, որտեղ ապրել է բառարանագիր, թարգմանիչ Հովսեփ Հովհաննիսյանի տանը: Վերջինս ունեցել է սեփական տպարան և հազվագյուտ գրքերի մեծ հավաքածու: Ս. Տեր-Ստեփանոսյանը Պետերբուրգից իր հետ Թիֆլիս է բերում որոշ գրականություն, որի մեջ է հավանաբար եղել նաև մարտիլյան 1485(6) թ. հրատարակությունը: Իսկ Ծե վերջինս ինչ ճակատագիր է ունեցել, մնում է անհայտ:

տալ, որ մենք դեռ 1485-ից էլ վաղ տպագրություն չենք ունեցել: Եթե Ն. Սեր-Աստվածատրյանցը հաստատ լի հիշում տպագրվալը, ապա որոշակիորեն տեղեկացնում է, որ 1485(6) թ. լույս տեսած այդ գրքում տպագրված է եղել հայերեն երկաթագիր տառերով սաղմոսից մի հատված: Իսկ այդ վկայությանը չհավատալու ոչ մի հիմք չունենք: Ուրեմն, պիտի ընդունել, որ հայերեն տեքստեր լույս են տեսել արդեն տպագրության խանձարուրային (ինկունաբուլային) շրջանում: Այս մասին մենք երկու անգամ հաղորդել ենք մամուլում (Քրթթերի աշխարհ, 15. V. 1973, «Հայրենիքի ձայն», 1. V. 1974): Ուստի և այս վկայությունը անպայման պիտի տեղ գտնեն հայ հնատիպ գրքի սույն համապարփակ մատենագիտության թե՛ առաջարկում և թե՛ համապատասխան ցանկերում: Ի դեպ, Ն. Սեր-Աստվածատրյանցը նույն տեղում հիշում է նաև հայ տպագրության սկզբնավորմանը նվիրված Կապևտի հոդվածը՝ լույս տեսած «Ռանասեր» հանդեսում (1903, 6—7, էջ 203), որը նույնպես հիշված չէ այս մատենագիտության մեջ:

Առաջարկում ենք նշված են հայ հնատիպ գրքի տպագրական առանձնահատկությունները, զարգացման ընթացքը, ապա համառոտակի ներկայացված են հայ գրքի ընդհանուր մատենագիտություն կազմելու անցյալ փորձերը: Ձեռագրված է այդ ասպարեզում Գ. Զարհանյանի և Ա. Ղազիկյանի կատարած աշխատանքը: Այնուհետև խոսվում է 1958 թ. ի վեր Մյասնիկյանի անվան գրադարանում հայ գրքի ամբողջական մատենագիտություն ստեղծելու ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին:

Հատորում բնդրված են ոչ միայն զուտ հայերեն բոլոր հնատիպ գրքերը, այլև դուգահեռ լեզուներով, հայատառ այլալեզու և XVI դ. հայերեն հատվածներ պարունակող հրատարակությունները, ընդգրկված են նաև այն բոլոր քարտեզները, օրացույցները, հմայիլները, կոնդակները, արտոնագրերը և հայատառ այլ կարգի նյութեր, որոնք տպագրվել են մինչև 1800 թ.: Այդ տպագիր բոլոր նյութերը, ըստ այս մատենագիտության, 1155 միավոր են: Հատորում, սակայն, նկարագրված են 1095-ը. XVII—XVIII դդ. հայերեն բնագրեր պարունակող 60 անուն այլալեզու գրքերը, որոնց ուսումնասիրությունն ավելի շատ ժամանակ է պահանջում, իրենց արտացոլումը կգտնեն մատենագիտության լրացուցիչ հատորում:

Ենթևում հնատիպ գրքերի յուրահատուկ բնույթից ու կարևորությունից, կազմողները նկարագրությունը կատարել են ուրույն եղանակով, որ առավել լայն ընդգրկման ու մանրամասն տեղեկատվության հնարավորություն է ընձեռում: Ընդ որում, նկարագրությունը կազմված է երկու հիմնական մասերից՝ համառոտ և ընդարձակ: Համառոտ նկարագրության մեջ նշվում են գրքի ամենակարևոր տվյալները՝ հեղինակի, թարգմանչի, հրատարակչի, կազմողի անունները, գրքի վերնագիրը, տպագրվալը, տարեթիվը և այլն: Իսկ մանրամասն նկարագրության մեջ նախ ամբողջությամբ բերվում է տիտղոսաթերթը, ապա կայուն հերթականությամբ՝ նշվում են գրքի բոլոր ծավալային-քանակական հատկանիշները (մամուլ, էջակալում, շարվածք, զարդագրեր և այլն): Այնուհետև ներկայացվում է բովանդակությունը. էջերի կամ մամուլների նշումով թվարկվում են գրքում գտնված բոլոր նյութերը կամ երկրի գլուխներն ու մասերը: Ապա, մեծ մասամբ ամբողջաբար, մեջ են բերվում գրքի առաջաբանը, հիշատակաբանը և ընթերցողին ուղղված ներածականը: Այնուհետև նշվում են այն գրադարանների ու գրքային մասնավոր հավաքածուների անունները, որտեղ պահվում են տվյալ գրքի օրինակները: Ընդ որում, նշվում է նաև, թե տեխնիկական ինչ վիճակում է գտնվում տվյալ օրինակը: Սրա շնորհիվ մատենագիտական այս հատորը, փաստորեն, նաև հայ հնատիպ գրքի համահավաք գրացուցակ է: Հաջորդ բաժնում նշվում են նաև այն մատենագիտական աղբյուրները, որոնց մեջ խոսվում է տվյալ տպագիր նյութի մասին: Դատելով հապավումների ու համառոտագրությունների ցանկից, կազմողներն օգտագործել են բազմաթիվ մատենագիտական աղբյուրներ, որոնց քանակն, անշուշտ, կարելի է շատ ավելի մեծացնել: Նկարագրությունները հաճախ եզրափակվում են հակիրճ կամ հանդամանալի ժանրագրություններով, որտեղ կազմողներն, ըստ հարկի, ճշտում են տպագիր նյութերի մասին մատենագիտական աղբյուրների անճիշտ տեղեկությունները կամ ներկայացնում այդ աղբյուրներում բացակայող տվյալներ: Ըստ այդմ, մեր առջև ոչ միայն զուտ մատենագիտական, այլև բանասիրական-բնագրագիտական աշխատանք է:

Կազմողները ձգտել են հնարավոր լրիվությամբ ներկայացնել նաև տպագիր գրքերից շատ բանով տարբեր մյուս հնատիպ նյութեր (քարտեզներ, կոնդակներ, արտոնագրեր և այլն), նկատի ունենալով դրանց որոշ յուրահատկություններ:

Մատենագիտության մեջ նկարագրված են անթվակիր գրքերը, այսինքն՝ այն տպագիր միավորները, որոնց լույս ընծայման ժամանակը ամենատարբեր պատճառներով առայժմ

հայտնի չէ՝ Երրորդ բաժնում ընդգրկված են XVI դ. այլալեզու այն գրքերը, որոնց մեջ կան հայալեզու և հայատառ հատվածներ։ Եվ վերջապես, «Լրացումներ» բաժնում՝ այն գրքերը, որոնք հայտնաբերվել են սույն մատենագիտության շարվածքն ավարտվելուց հետո։

Անհրաժեշտ է նշել, որ մատենագիտության մեջ նկարագրվող գրքերը ընթերցողին ավելի «տեսանելի» են ներկայացվում, երբ նկարագրություններին կից տրվում են դրանց անվանաթերթերի, առանձին հատկանշական էջերի, նկարազարդումների լուսանկարները։

Չափազանց դժադատելի է այն ծառայությունը, որ մատենագիտության հեղինակները մատուցում են ուսումնասիրողներին, հրապարակ հանելով հնատիպ գրքերի բովանդակած նյութերի ցանկը, ոչ միայն բավական հեշտացնելով նրանց նախնական գիտահետազոտական աշխատանքը, այլև ընձեռնելով նորանոր տվյալներ։ Գնահատելի է նաև հիշատակարանների ու առաջաբանների հրապարակումը, նյութեր, որոնք ունեն նշանակալից դրապատմական արժեք։

Մատենագիտության հեղինակները երկարատև պրպտումների ընթացքում հայտնաբերել են 131 անուն հնատիպ գիրք, որոնք տեղ չեն գտել մատենագիտական աղբյուրներում և զուրկ են մնացել բանասիրության տեսադաշտից։ Դրանցից է, օրինակ, 1709 թ. Կ. Պոլսում, Սարգիս Դպրի տպարանում լույս տեսած «Դպրութեան գիրք և Տաղարան»-ը, որն ընդգրկում է յազմաթիվ շարականներ և միջնադարյան հայ քնարերգուների հոգևոր ու աշխարհիկ տաղեր (էջ 174—175)։

1963 թ. լույս տեսած «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակի» շնորհիվ ժամանակի ընթացքում Մյասնիկյանի անվան գրադարանի հասցեով ստացվել են ոչ միայն մի շարք արժեքավոր հնատիպ գրքեր, այլև բաղմաթիվ մեծարժեք գրքերի լուսապատճեններ, որոնց մեծ մասը հիշատակված ըէ անդամ մատենագիտական աղբյուրներում։ Դրանց մեջ կան նաև այնպիսի հազվագյուտ գրքեր, որոնք պահպանվում են մեկ ու միակ օրինակով։ Այսպես, Նրուսադեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում է պահվում 1681 թ. վենետիկում լույս տեսած և բանասերներին անհայտ մնացած մի շատ բովանդակալից Տաղարան, որի նկարագրությունն առաջին անգամ հրապարակվում է սույն մատենագիտության մեջ (էջ 85—86)։

Այս հին ու նոր բազմահարուստ նյութերի հիման վրա մատենագիտության հեղինակները կարողացել են պարզել հնատիպ գրքերի հրատարակության տարեթիվների, տպարանների, տպագրավայրերի և այլ հանգամանքների հետ կապված մի շարք հարցեր, ճշտելով մեզ հայտնի գրքերի քանակը (1155 անուն)։ Դրանք լույս են տեսել մոտ երեք տասնյակ քաղաքներում և հարյուրից ավելի տպարաններում։ Շուրջ վաթսուներեք հնատիպ գրքերի տպագրավայրերը, սակայն, տակավին մնում են չպարզաբանված։ Հայտնի են դարձել հայերեն գրքեր հրատարակած Լրկու տասնյակից ավելի տպարաններ, որոնք գործել են Կ. Պոլսում, Լոնդոնում, Հոռմում, Վենետիկում, Փարիզում և այլուր։ Ընդամենը, մոտ երեք տասնյակ հայկական տպարաններ գործել են միայն Կ. Պոլսում և հայերեն գրքեր արտադրող մեծ քսան տպարան՝ Վենետիկում։ Պարզվել է նաև, որ XVI դ. Մայնցում, Ցյուրիխում, Փլոլնում, Ֆրանկֆուրտում, Բավարիայում, Բեռլինում, Հոռմում և Փարիզում լույս տեսած 15 անուն այլալեզու գրքերում կան հայերեն և հայատառ տեքստեր, որոնց մի մասը նորահայտ է։

Մատենագիտությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ի՞նչ կարգի և որքա՞ն գիտական, կրոնական ու գեղարվեստական գրականություն է լույս տեսել XVI—XIX դդ.՝ ի պետս հայ ժողովրդի։ Ե՛րբ և ի՞նչպե՞ս է սկիզբ առել աշխարհաբար գրականությունը, ի՞նչ լեզուներից են թարգմանություններ կատարվել և այլն՝ այս և նման տեղեկատվությունը ավելի հեշտ ու նպատակասլաց կերպով հաղորդելու համար են կազմվել մատենագիտությունը եզրափակող ցանկերը։

Մատենագիտական այս արժեքավոր հատորը հնարավոր ամբողջությամբ ու հանգամանալի նկարագրությամբ է ներկայացնում աշխարհում մեկ սփռված հայ հնատիպ գրքերը՝ դրանք մատչելի դա՞ռնելով հայ մշակույթն ուսումնասիրողին։

Հ. Գ. ԲԱՆԶԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր